Հաստատում եմ՝ Digitally signed by DANIELYAN VACHAGAN1904610145

Դպրոցի տնօրեն՝ Վ. Դանիելյան

Նախագծային աշխատանք

Նախագծի ղեկավար՝ Ս. Գինոսյան

Ուսումնական նախագծի թեմա՝ Մեդիագրագիտությունը որպես արդյունավետ դասավանդման միջոց	
Նախագծի անվանում՝	Մեդիագրագիտությունը մեր առօրյայում
Առարկա(ներ)՝	Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն
Ուսումնական տարի, կիսամյակ	2023-2024թթ, առաջին կիսամյակ
Դասարան	VII
Տևողություն	5 շաբաթ 16.01.2023 -20.11.2023 /երկուշաբթի/
Նախագծի իրականացման փուլեր	1.Նախագծի թեմայի ընտրություն Հիմնահարցի ձևակերպում 2.Աշխատանքային խմբերի ձևավորում Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաշխում 3.Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ 4.Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ 5.Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
Վերջնաժամկետ՝	20.11.2023թ
Նախագծի տեսակը	☒ ներառարկայական ☐ միջառարկայական ☐ վերառարկայական
Չևաչափը	☐ տեսական ☐ գործնական ☐ անհատական ☒ թիմային ☐ ընթացիկ ☐ ամփոփիչ

ՆԱԽԱԳԾԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ
• Աշակերտներին օգնել հասկանալ լրատվամիջոցների աշխատանքը, շարժառիթները և ուղղվածությունը, քարոզչությունը տարբերել օբյեկտիվ տեղեկատվությունից, խուսափել մեդիայի բացասական ազդեցությունից... • Զարգացնել այն միտքը , որ մեդիագրագիտության դասընթացի նպատակը ոչ թե մեդիա արտադրող, այլ՝ սպառող պատրաստելն է: • Պատկերացնել մեդիայի բազմազանությունը և գնահատել դրա դերը՝ մարդու եւ հասարակության կյանքում: • Քննարկել մեդիա հասկացությունը լայն ընկալմամբ՝սկսած ժայռապատկերներից, գրքից, մինչեւ ռադիո եւ հեռուստատեսություն, վիրտուալ աշխարհ, սոցցանցեր: Վերլուծել այդ ամենի կիրառությունը, ազդեցությունը մարդու ամենօրյա կյանքի վրա:
ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ
• Սովորողը ճանաչի մեդիան ու դրա բազմազան կիրառությունը, կարողանա նկարագրել ու բացատրել դրա դերը իր և ուրիշների կյանքում: • Գնահատել սոցիալական մեդիայի օգտագործման սեփական փորձը և կիրառել միջոցներ հնարավոր վտանգները նվազագույնի հասցնելու համար: • Սովորողը կկարողանա. - Գտնել տեղեկատվության ճիշտ աղբյուրներ: - Առավել արդյունավետ եղանակով որոնել ինտերնետ ռեսուրսները: - Գնահատել թվային աղբյուրների արժեքի և հասանելիության տեսանկյունից: - Գնահատել թվային աղբյուրների որակը հուսալիության տեսանկյունից՝ հաշվի առնելով թվային տեղեկատվության թարմությունը, տեղին լինելը, հեղինակի ինքնությունը, ճշգրտությունը և նպատակը: - քննադատորեն վերլուծել մեդիայի բովանդակությունը:
ՆԱԽԱԳԾԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ
Ուսուցիչն ու աշակերտների հետ դուրս է բերում հետազոտության հիմնահարցերը: Առաջադրանքի կատարման համար կազմվում են ենթախմբեր: Ուսուցիչն աշակերտներին ներկայացնում է նախագծային աշխատանքի իրականացման ընթացքը՝ փուլերը: Այնուհետև հնարավորություն է տալիս, որ խմբերում աշակերտներն ստանձնեն դերեր՝ 1. Նախագծի կառավարիչ 2. Ժամանակի և աշխատանքների կառավարիչ

3. Հաղորդակցության կառավարիչ
4. Հետազոտության համակարգող
5. Հանրային կապերի պատասխանատու

Ուսուցիչը տրամադրում է ժամանակացույցը:Աշակերտները ուսումնասիրում են Մեդիագրագիտության վերաբերյալ նյութեր, հասկանում՝ ինչ է նշանակում մեդիագրագետ լինել: Այնուհետև առանձին խմբերով կատարում են փոքրիկ հետազոտություն, թե որքանով են մեզ շրջապատող մարդիկ մեդիագրագետ: Նրանց մի խումբը պետք է անհրաժեշտ հարցերի բանկը կազմի, մյուս մասը սովորի առցանց հարցաթերթիկ պատրաստել/Google Forms ծրագրով/ և ուղարկել իրենց շրջապատող մի որոշ թվով մարդկանց : Այնուհետև պատասխանների արդյունքը համակարգել՝ձևավորել դիագրամ , որը կպարունակի հետազոտության արդյունքները և կներկայացվի սահիկաշարի միջոցով:

Կարողություններ, որոնք կզարգանան այս նախագծի ընթացքում

☒ Սովորել սովորելու կարողունակություն
☒ Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
☐ Տնտեսական կարողունակություն
☒ Մաթեմատիկական և գիտատեխնիկական կարողունակություն
☒ Լեզվական գրագիտություն և կարողունակություն
☒ Մշակութային կարողունակություն
☒ Ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն
☒ Թվային և մեդիա կարողունակություն

ՀՊՉ –ի հղումը՝

Հանրակրթության պետական չափորոշիչ, 2021,
https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

Հետազոտության հիմնախնդիրը (մարտահրավերային հարցը)

Քննարկել մեդիա հասկացությունը լայն ընկալմամբ՝սկսած ժայռապատկերներից, գրքից, մինչեւ ռադիո եւ հեռուստատեսություն, վիրտուալ աշխարհ, սոցցանցեր: Վերլուծել այդ ամենի կիրառությունը, ազդեցությունը մարդու ամենօրյա կյանքի վրա:

Պարզել , թե որքանով են մեզ շրջապատող մարդիկ մեդիագրագետ:

Հիմնական հարցեր

- Ո՞վ է նյութի հեղինակը:
- Ո՞րն է նյութի հիմնական ասելիքը:
- Ո՞ւմ է ուղղված նյութը:
- Ի՞նչ հնարքներ են կիրառել նյութում:
- Ի՞նչ նպատակ ունի այս նյութը:
- Ո՞վ է վճարում սրա համար:
- Որո՞նք են անձնական տվյալներ:

Սովորողների ինքնուրույն հետազոտական գործունեություն

Ենթախմբերն առանձին- առանձին կատարում են իրենց աշխատանքը/իրենց հանձնարարված նյութի ուսումնասիրություն/ յուրաքանյուր ենթախումբը իր ուսումնասիրած նյութից հարցեր է առնանձնացնում հետազոտության համար

Միջառարկայական կապեր

☐ հայոց լեզու	☐ քիմիա	☐ աշխարհագրություն
☐ հայ գրականություն	☐ հայոց պատմություն	☐ երաժշտություն
☐ օտար լեզուներ	☐ կենսաբանություն	☐ կերպարվեստ
☐ մաթեմատիկա	☐ բնագիտություն	☐ ինֆորմատիկա
☐ հասարակագիտություն	☐ ֆիզիկա	☐ տեխնոլոգիա
☐ համաշխարհային պատմություն	☐ մարամնակրթություն	☐ բեմարվեստ

Տարիքային խումբ			
☐ Կրտսեր դպրոց	☒ միջին դպրոց	☐ ավագ դպրոց	☐ խառը

Նախագծի վերջնարդյունքների ներկայացման տեսակներ	
☐ Ամսագիր կամ թերթ,պաստառ	☐ Վեբ-կայք
☐ Տեղեկատվական թերթիկ	☒ Սահիկաշար
☐ Տեսանյութ	☐ Սոցիալական գովազդ, հոլովակ
☐ Զայնվածք (փոդքասթ)	☒ Բուկլետ
☐ Դասընթացներ	☐ Կլոր սեղան քննարկում
☐ Մրցույթ/ միջոցառում	☐ Ֆլեշմոբ/ տարածում կայքերում
☐ Ցուցահանդես	☐ Առաջարկ պատկան մարմիններին
☐	☐

Հետազոտության աղբյուրներ
Համացանց

Գնահատում
Գնահատման ռուբրիկը Հավելված1-ում

Թիմեր, դերեր

Թիմի անդամներ	Դերեր	Պատասխանատվության շրջանակ	Ժամկետ
Սեթ	նախագծի կառավարիչ հանր. կապերի պատասխ.	Սահիկաշարի պատրաստում Հարցերի մշակում	
Միլենա	ժամանակի և աշխ. կառավարիչ	ժամանակի պատասխանատու և տվյալների մշակում:	
Սարգիս	հաղորդակցության կառավարիչ	Հարցերի մշակում	
Վալենտինա	Հանրային կապերի պատասխու	Հարցազրույցների վարում օնլայն,հարցերի մշակում :	

Արտավազդ	Հետազոտության համակարգող	Հարցազրույցների վարում,հարցերի մշակում ։ Հարցազրույցի հարցերի կազմում նտվյալների վերլուծում	
Ալեն	Հանրային կապերի հետ աշխատանքներ իրականացնող թիմի անդամ։	Հարցազրույցների վարում,հարցերի մշակում ։	
Գևորգ	Հանրային կապերի հետ աշխատանքներ իրականացնող թիմի անդամ։	Հարցազրույցների վարում,հարցերի մշակում ։	
Արշակ	Հանրային կապերի հետ աշխատանքներ իրականացնող թիմի անդամ։	Հարցազրույցների վարում,հարցերի մշակում ։	
Նարեկ	Հանրային կապերի հետ աշխատանքներ իրականացնող թիմի անդամ։	Հարցազրույցների վարում,հարցերի մշակում ։	

	Շաբաթ I	Շաբաթ II	Շաբաթ III	Շաբաթ IV	Շաբաթ V
Թեմայի ընտրություն Հիմնախնդրի ձևակերպում Հիմնական հարցերի դուրսբերում	16.10.2023				
Աղբյուրների ընտրություն Հետազոտություն Հարցազրույցների վարում		30.10.2023			
Ձևավորող գնահատման փուլ 1 Թիմային քննարկումներ դասարանում			6.11.2023		
Ձևավորող գնահատման փուլ 2 Տվյալների մշակում Անդրադարձ-վերանայում				13.11.2023	
Հանրային ներկայացում					20.11.2023

<u>Ձևավորող գնահատման փուլ</u>
<u>Թիմային հանդիպում</u>

Ըստ հետազոտական աշխատանքի քայլերի՝ հստակեցնել, թե թիմերի հետ հանդիպմանը աշակերտները ինչ են ներկայացնելու ուսուցչին				
Թիմի	*Օր՝30.10.2023*	*Օր՝06.11.2023*	*Օր՝13.11.2023*	*Օր՝20.11.2023*

անդամներ	Ժամ՝ 15.30-16.15	Ժամ՝ 15.30-16.15	Ժամ՝ 15.30-16.15	Ժամ՝ 15.30-16.15
բոլորը	Իրենց կատարած ուսումնասիր. Թեմայի շուրջ			
բոլորը		Յուր. Ենթախ. կներկայացնի իր առանձն. հարցերը: Կազմել հարցաթերթիկ: Սկսել սահիկի նախն. աշխ		
բոլորը			Հարցման արդյունքների վերլուծում: Սահիկի աշխ. Ընթացքի ստուգում	
բոլորը				Ամբողջական ներկայացում

Հավելված*1*

Գնահատման ռուբրիկ

միավոր	Խմբային աշխատանք	Գրաֆիկական ձևավորում	Ներկայացման բանավոր խոսք	Բովանդակություն	Ինքնատիպություն	Մուլտիմեդիայի օգտագործում
1–3 Միավոր	Խմբում աշխատանքային պարտականությունները չեն բաշխվել, և որոշ անդամներ ընդհանրապես չեն ընդգրկվել աշխատանքներում: Գործնականում խմբային աշխատանք չի իրականացվել:	Աշխատանքը ներկայացված է պարզ շարադրանքի տեսքով: Մեծ ուշադրություն է դարձվել ցուցադրական նյութերին, ինչը խանգարում է բովանդակության ընկալմանը	Աշխատանքի արդյունքները ներկայացնում են ոչ հստակ: Խոսքը կցկտուր է, ոչ լիար-ժեք	Ուսումնասիրությունները չեն առնչվում հիմնախնդրին: Բացակայում է նյութի շարադրման տրամաբանական հաջորդականությունը: Առկաեն սխալներ	Նյութերը ներկայացվում են առանց որոշակի մշակման, սահմանափակ թվով միաբնույթ տեղեկատվական աղբյուրների հիման վրա:	Նյութերում բացակայում են մեդիաաղբյուրներ, մուլտիմեդիոն նյութեր, հղումներ:
4-6 Միավոր	Խմբի անդամների մեծ մասը մասնակցել է աշխատանք- ներին, բայց ծանրաբեռնվա-ծությունը նրանց միջև ան- հավասարաչափ է բաշխվել:	Աշխատանքը ներկայացված է շարադրանքի տեսքով, առկա է մեկ-երկու մեդիանյութ: Գրաֆիկական և մուլտիմեդիոն բաղադրիչները չեն խանգարում բովանդակության ընկալմանը, բայց ոչ միշտ են ճիշտ իրագործված, անհամաչափ են, չկա ընդհանուր ոճ:	Ներկայացնում են աշխատան-քի արդյունքները մասամբ: Ներկայացվող նյութին տիրապետում են մասամբ: Խոսքը սահուն է, սակայն բացակայում են հիմնավորումները:	Ուսումնասիրությունները մասամբ են առնչվում հիմնախնդրին: Նյութի շարադրանքը որոշակիորեն տրամաբանական է, սակայն առանձին հարցեր անհասկանալի են:	Նյութերը ներկայացվում են միօրինակ: Առկա են տեղեկատվական տարբեր աղբյուրներ:	Նյութերում օգտագործված են տեղեկատվության մեկ-երկու աղբյուր՝ հղումներով, մեկ-երկու մուլտիմեդիոն նյութ,որոնց ներկայացումը, սակայն, համակարգված չէ:
7-8 Միավոր	Խմբի անդամների մեծ մասն իր ներդրումն ունի ընդհանուր գործում:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Ձևավորման և բովանդակա- յին տարրերը լրացնում են միմյանց	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու արդյունքները: Թեմայի վերաբերյալ ներկայացնում են լրացուցիչ տեղեկություններ: Խոսքը սահուն է, համոզիչ, հուզական:	Ուսումնասիրություններն առնչվում են հիմնախնդրին: Նյութի շարադրանքը տրամաբանական է, առանձին բաղկացուցիչ մասերը լրացնում են իրար:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են հետաքրքիր մոտեցմամբ: Առկա են հեղինակային գաղափարներ: Ներառված է մեծածավալ տեղեկատվություն տարբեր աղբյուրներից:	Նյութերում օգտագործ- ված են մեդիաաղբյուրներ՝ հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ, նկարներ, տեսանյութեր, ձայնագրություններ: Կիրառված մուլտիմեդիոն տարրերը ոչ միշտեն հասկանալի դարձնում հարցերի ընկալումը

9–10 Միավոր	Աշխատանքներին հավասարապես մասնակցել են խմբի բոլոր անդամները:	Աշխատանքը ներկայացված է համակարգված, մատչելի, և հստակ տեսանելի են հիմնական գաղափարներն ու դրույթները: Մանկավարժական տեսակետից ձևավորման և բովանդակային տարրերը կազմում են մեկ ամբողջություն:	Լիարժեք ներկայացնում են աշխատանքի բովանդակությունն ու հիմնական դրույթները: Նյութը ներկայացնում են լիարժեք և բազմակողմանի: Խոսքը սահուն է, համոզիչ, փաստարկված, պատկերավոր և հուզականորեն հագեցած:	Ուսումնասիրությունները լիարժեք արտացոլում են հիմնարար հարցերը: Նա-խագծի բովանդակությունը հասկանալի է, տրամաբանորեն շարադրված, ընկալելի:	Նյութերը բազմազան են, ներկայացվում են յուրօրինակ մոտեցմամբ: Աշխատանքն աչքի է ընկնում առանձնահատուկ գաղափարներով, տեղեկությունները հավաքված են տարաբնույթ աղբյուրներից և ստեղծագործաբար վերլուծված են:	Նյութերում օգտագործ- ված են մեդիաաղբյուրներ՝ հղումներով, մեդիանյութեր՝ գծապատկերներ, դիագրամներ, ծաղրանկարներ,նկարներ, անիմացիաներ, տեսանյութեր,վիճակագրական տվյալներ, սոցհարցումների ձայնագրություններ: Մուլտիմեդիոն տարրերն ընդգծումեն նյութի բովանդակային մասը և հեշտացնում բարդ հարցերի ընկալումը: